

ՅԵՏ ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ

ԱՐՏԱՆԱԶԴ Ա.

56—30 տարի Քս. ձ. առաջ

Մեծն-Տիգրանին յաջորդում է Արտաւազդ Ա. որը պատե-
րազմում է ինչպէս Պարթեական
Միհրդատ Դ. և Որոտի հետ, նոյն-
պէս Հռոմայեցի Կրասոս և Անտո-
նիոս կոնսուլներին հետ. վերջինս նը-
րան բռնեց, շղթայեց և Փոքր-Հայքը
ուեց Պոնտոսի Թագաւոր Պոլե-
մոն Ա-ին:

Գառ. Թիւ 61



Արտաւազդ

1. Դրամ. Արտաւազդ առաջի-
նի այս դրամը շատ հազադէպ է և գտնւում է ընդամենը 4—5
օրինակ: Ա. երեսին ունի Արտաւազդի պատկերը, որի անդրին
նկարուած է աջադէմ մինչև կուրծքը: Հօրը նման անիւում է,
գլխին Տիգրանեան թագ ունի, միայն առանց ականջկալի, որին
փոխարինում է լայն վզկալը և ապառօշը: Վզին մանեակ ունի,
ծիրանին շրջապատած է ուսերը: Դրամի շրջապատը մարգար-
տաշար է:

Բ. երեսին Թագաւորը քառաձի կառքով սրարշաւ գնում է
դէպի ձախ, աջում յաղթականը բռնած: Արձանագրութիւնն է
վերեւը ΒΑΣΙΛΕΥΣ (Թագաւորին) կառքի տակը ΒΑΣΙΛΕΥΩΝ ΑΡ-

Գառ. Թիւ 62

ΤΑΥΡΑΖΔΟΥ — Թագաւորների Արտա-
ւազդի: Ձախ կողմը կայ պատկեր
Թիւ 2 մենադիր 28 — միայն եր-
կուսի փոխարէն երեք շարք գծով,
իսկ ձիերի գլխի I.-Մ տառը, որը հա-
ւանական է Մոփի դրամատան նշանն
է: Վերոյիշեալ մենագիրը նախ-Ադէք-



Արտաւազդ

սանդրեան շրջանի Մագայոսին վերագրուած դրամների վրայ ևս
նկատուած, բայց չի բացատրուած: Թւում է թէ կապ ունեն
իրար հետ:

2. Երկրփող. Փարիզի ազգային թանգարանում կայ մի պղ-
դինձ, որը նկարագրել է E. Babelen-ը. Ա. երեսին Արտաւազդի
անդրին, հայկական թագով և արքայական ապառօշով դէպի աջ:
Անդրու ետեւը նշմարւում է ձ տառը, որը ցոյց է տալիս զրա-
մահառական քաղաքը—ΑΡΤΑΣΑΤ: (?):

Բ. երեսին. Յաղթականը գնում է դէպի ձախ, աջում պը-
սակ բռնած: Առաջը ΒΑΣΙΛΕΩΣ և ետեւը ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΤΑ-
ΥΑΣΔΟΥ.

Այս երկու զրամներն ապացոյց են այն վէճին, որով Ար-
տաւազդը տքնում էր Միհրդատ Գ.-ի և Որոտ Ա.-ի դէմ թագա-
ւորների թագատրո տիտղոսի համար, որոնք սեփականել էին
պարս. պարթևները և իրենց զրամների վրայ արձանագրել:

ՏԻԳՐԱՆ Բ.

3. Երկրփող. Տիգրան Բ. Արտաւազդ Ա. որդին էր, որին
հայերը Օգոստոս կայսրից խնդրեցին Արտաշէս Բ. իր եղբորից
յետոյ, Արտաւազդի կալանաւորումից և տարագրութիւնից յետոյ
Հայաստանը կառավարում է Արտաւազդի աւագ որդին Արտա-
շէսը: Բայց վերջինից դրամ չուներ և նրան հեռացնելու պատ-
ճառներն էլ անորոշ են:

Երկրփող Ա. երես. Միակ երկ-
փողը այս թագաւորի նկարագրւած
է E. Babelon-ից, որը Փարիզի Ազգ.
Թանգ. սեփականութիւնն է կաղ-
մում: Ա. երես. թագաւորը Տիգ-
րանեան թագով, աջդէմ, վզկալով,
ականջկալով և ապառօշով, մօ-
րուսաւոր Բ. երեսը. Ոսկեամայրը
նստած է դէպի ձախ, զահի վրայ, աջում սկիհ ունի, ձախում
առատութեան եղջիւր: Այս նկարի վրայի քանդակները տքնել են
Տիգրան Մեծի զրամներին նմանացնել. տես 21 հատոր «Ազգա-
դրական Հանգէս»-ի, երես 121, պատկեր թիւ 18:

Գառ. թիւ 63




Տիգրան Բ.

ԱՐՏԱՒԱԶԴ Բ.

5. Դրամ. Օգոստոս կայսեր հետ տպագրւած մի դրամնայ րբիտանական թանգարանում, որը վերագրուած են Արտաւազդ Բ.-ին:

Պատ. թիւ 64



Արտաւազդ Բ.

տաւազդ Բ.-ին կարելի է վերագրել, որը Օգոստոս կայսեր կողմից Հայաստանի վրայ թագաւոր էր նշանակւած: Թէև կան օտար պատմիչներ, որոնց հետեւելով և Babelon-ը կարծում է թէ սա Մարական Արիորազանի որդի Արտաւազդին է, որը Արեւելեան-Հայաստանի թագաւոր էր, բայց նրանք շփոթում են:

Ա. Երես. Արտաւազդի պատկերը, բաց գլխով, մագերի վրայ կրում է վարսակալ, որի ծայրերը ապառօշի նման ետը հանգուստւած և կախուած են: Աջադէմ է անդրին, ածիւրւած, վիզը զարդ չունի: Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ ΑΡΤΑΒΑΖΔΟΥ—Թագաւորին մեծի Արտաւազդի: Դրամի վրայ Դ—Գ. տառը դրոշմւած է, որ չի բացատրւած:

Բ. երես. Օգոստոս կայսեր պատկերն է, բաց գլխով, պըսակ վարսակալով աջադէմ: Արձանագրութիւնն է. ΒΕΟΥ ΚΑΙΣΑΡΟΣ ΕΥΕΡΓΕΤΟΥ. Աստուծոյ կայսեր բարերարին: Այս դրամը կարուած է մօտաւորապէս Քս. ծ. առաջին տարին:

ՏԻԳՐԱՆ Գ.

4. Երկրորդ. Ա. երես Տիգրան Գ.-ի դրամը ձախադէմ, տ հմական թագով, ապառօշով և մարգարտաշար շրջանակով: Բ. ե-

Պատ. թիւ 65

Արձանագիրն է ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ Թագաւորին մեծի



ΤΙΓΡΑΝΟΥ
Տիգրանի
(Գ.)

Տիգրան Գ.

րես. Թագթականը առաջ է գնում դէպի աջ, ձեռքին արմաւենի: Երկու մենագրերն անընթեռնելի են:

5. Երկփող Ա. երեսը. անփոփոխ է:

Բ. երեսը. Մի հսկայ դէպի աջ կանգնած է, երկարայուն քօլոզը գլխին, մի կարճ պատմունճան հագին, ձախով նիզակին յառած, աջով որսական բազէն ձեռքին:

Գաւ. թիւ 66

Արձանագիրն է ΒΑ-
ΣΙΑΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ
Թագաւորին մեծի



ΤΙΓΡΑΝΟΥ ΦΙΛΕ-
ΝΗΝΟ Տիգրանի
(Գ.) Յունասիրի

Տիգրան Գ.

6. Մի փող Ա. երես Տիգրան Գ-ի գլուխը թագով, աջա-
դէմ, ապառօշով: Բ երեսին, մերկ ձին դաշտում ուղղւած է դէպի
ձախ, սրէնթաց քայլերով ոտքից մէկը գետնից բարձրացրած:

Գաւ. թիւ 67

ΒΑΣΙΛΕΩΣ ΜΕΓΑ-
ΛΟΥ Թագաւորի
մեծի



ΤΙΓΡΑΝΟΥ Տիգ-
րանի (Գ.)

Տիգրան Գ.

ՏԻԳՐԱՆ Գ. ԵՒ ԵՐԱՏՈՎ ԹԱԳՈՒՅԻ

Տիգրան Գ-ի մի դրամը կայ Փարիզի Ազգային գրադարա-
նում, որի Ա. երեսին Տիգրան Գ-ի պատկերն է թագով, ապա-
ռօշով, մանեակով և ծիրանու ունոցներով: Արձանագրութիւնն
է ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΤΙΓΡΑΝΗΣ.—Թագաւորին թագաւոր-
ների Տիգրանի (Գ.)

Գաւ. թիւ 68

ΕΡΑΤΟ ΒΑσι-
ΛΕΩΣ



Երատոյ Թա-
գունի

Տիգրան Գ. Երատով

Բ. երեսին. Երատով Թագունու գլուխը, ձախադէմ, մազերը
ամփոփած գլխի վրայ: Արձանագրութիւնն է ΑΔΕΛΦΗ.

Վ Ո Ն Ո Ն (16 թ.)

Որովհետեւ Պարթև-պարսկական Վոնոն թագաւորը Հայաստան ապաստանելուց յետոյ, Հայաստանում մի առ ժամանակ թագաւորեց, մինչև Հռոմայեցիք հեռացրին նրան երկրից, ուստի

Պատ. թիւ. 69



Վոնոն

Վոնոնի դրամներից մէկի պատկերը—որպէս Հայոց թագաւորի պատկեր—կցում ենք այս ցուցակին:

Ա. նրես. Զորեքդրամ ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΟΝΩΝΗΣ, թագաւորի անդրին պատկաւոր:

Բ. նրես. ΒΑΣΙΛΕΥΣ ΒΑΣΙΛΕΩΝ ΑΡΣΑΚΟΥ ΕΥΕΡΓΕΤΟΥ ΔΙΚΑΙΟΥ ΕΠΙΦΑΝΟΥΣ ΦΙΛΕΛΛΗΝΟΣ. Յաղթականը պսակը ձեռքին դէպ ձախ ուղղուած: Թուականն է ΓΚΤ—323. Սելևկեան:

ԱՐՏԱՍԵՍ—ԶԵՆՈՆ—ՊՈՆՏԱՅԻ

Գերմանակոսը Տիրեր կայսեր հրամանաւ Արտաշատում չափաւորեց Վոնոնի թագաւոր պսակեց

Պատ. թիւ 70



Պոնտոսի Պոնտոն թագաւորի որդուն Զենոնին—Արտաշէս անունով (Բ.): Սրա դրամի մասին ականարկում է Գաթրճեանը Բ. հատորում Տիրերիոս կայսեր մի դրամը, որ Բ. երեսին յաղթականը զնդի վրայ,

դափնեայ պսակ ձեռքին:

ՏՐԴԱՏ ԿԱՄ ՏԻՐԻԹ Ա.

Երբ խաղաղութեան դաշն կապեցին պարթևներն ու Հռոմայեցիները, Տրդատ դնաց Հռոմ ներսնից թագաւոր պսակուեց,

58 թվականին, որի աղագաւ ներոն կտրել տուեց դրամը իր պատկերով, որի Բ. երեսին ՀԱՅԱՍՏԱՆԸ ՆՈՒԱՃՈՒԱԾ. Յագթականը աջ ձեռքին. արմաւենի պսակ:

Տրդատի որդի Արտաւազդի, Երւանդի, Աշխադարի Պարթամասիրի և Պարթամասպի անունով դրամ մինչև այժմ—83—140թ. —չեն նկատուած:

ԱԳԵՄԻՆԻԴ (Որդի Պարթամասպատի) 140—159 թ.

Սրա անունով մի դրամ կայ Անտոնիոս Օգոստոսի կտրել տուած, 143 թ. որտեղ կայսրը պսակում է Աքեմենիդին Հայաստանի թագաւոր:

Ա. երեսին. Կայսեր անդրին և շրջապատը. Antonius Cos III Augustus. իսկ Բ. երեսը Rex Armeniis.

ՍՈՅԵՄՈՍ (159—169 որդի Աքեմենեայ)

Դրամ. Վերոս կայսրը զահին բաղմած, զօրականները շրջապատած, որոց մէջն է Սոյեմոսը, որի գլխին Վերոսը գնում է հայկական թագը:

181—216 թ. Սանատրուկի, Վաղարշի, Արզարի և Տրդատ Բ-ի մասին ոչ մի դրամական յիշատակարան գեռ ևս չի գտնուած:

ԿՈՄՄԱԳԵՆԻ ԹԱԳԱՒՈՐՆԵՐ

1. Ինչպէս յայտնի է պատմութիւնից, Հոռմէացիները արեւմուտքից, պարթևները արևելքից, մանաւանդ ներքին իշխանութիւններն ու նախարարութիւնները այնպիսի ընթացք բռնեցին, որ Վաղարշակի միաւորած և Տիգրան Մեծի աշխարհակալած երկիրները բաժան բաժան եղան: Տիգրան Մեծի օրով նոյնիսկ ոչ միայն Միջագետքը, Սուրիան, Փիւնիկէն, Հրէաստանը դուրս եկան Հայկական իշխանութիւնից, այլ Փոքր-Արմենիայում և նոյն իսկ Մեծ-Հայքի մասերում նորանոր թագաւորութիւններ հաստատեցին հռոմայեցիները, իրենց սկզբունքի համաձայն, «բաժանիր, որ տիրես», որպէսզի Հայկական այն հզօրութիւնը, որից սարսափում էր նոյնիսկ Գիկերոն հռոմորը, ջախջախեն և իրենց առաջխաղացման արգելքներն անհետացնեն: Ինչպէս Արևելքից Արևմուտք արշաւողները իրենց զէնքի ոյժը փորձում էին Հայկական երկրներում, նոյնը կատարել են Արևմուտքից Մակեդոնացին, Հռոմայեցիները և ապա Բիւզանդացիները:

Այս նորահաստատ պետութիւններից մէկն էլ Կոմագենի

Թագաւորներն էին, որոնց դրամները, ինչպէս մենք տեսանք, մեծն Տիգրանից առաջ նոյնը մենք գտնում ենք նրանից յետոյ: Անտիոքոս Ա. Թէոսից՝ Կոմմազենի Թագաւորից մօտ 70 տարի յետոյ, նոյն երկրի իշխան Անտիոքոս IV Նպիփանոսը կտրել է տալիս իր անունով դրամներ:

Անտիոքոս Ա-ը Տիգրանի յաղթելուց յետոյ, դաշնակցում է Լուկուլլոսի և ապա Պոմպէոսի հետ, շարունակում է իշխել Սա-մուշատում, Կոմմազէնի սահմանները դէպի Միջագետք, Մոփք և Մալաթիա ընդարձակւած: Թէև Հռոմայեցիները հանգիստ չեն թողնում նոյնիսկ իրենց դաշնակից Կոմմազէնին: Քա. ծ. 30 տա-րի առաջ այնտեղ իշխում է Միհրդատը, Անտիոքոսի որդին, Հռոմայեցիները իրենց ստացած հարկ-կաշառքների շնորհիւ վերց-նում են և Միհրդատ Բ-ին, տեղը գնելով եղբօրը՝ Անտիոքոս Բ-ին: Քա. ծ. 20 տարի առաջ, մենք հանդիպում ենք Միհրդատ Գ-ին և ապա Անտիոքոս Գ-ին Քա. ծ. 17 տարի յետոյ: Այս չորս իշխան-ներից և ճշ մի դրամ մինչև օրս չի նկատւած: Տիրեր կայսրը Կոմ-մազենը վերածեց մի Հռոմէական նահանգի, որը պրետորներով էր կառավարւում:

Կալիգուլան ճշ միայն վերահաստատեց Կոմմազէնի Թա-գաւորութիւնը, յանձնեց Անտիոքոս Գ-ին, այլ նրա պետու-թիւնը ընդարձակեց աւելացնելով Կիլիկիան: Անտիոքոսը իր զօրքերով օգնեց Ներոնի զօրավարներին պարթևական պատե-րազմում, որի համար ստացաւ Արեւմտեան Հայաստանի մի մասը: Բայց և այնպէս՝ Կոմմազէնի Թագաւորը երբէք նենգաւոր

Պատ. Թիւ 71



Հռոմայեցիների վրայ վստահութիւն չունէր և տքնում էր վերա-կանգնել Տիգրան Մեծի պետութիւնը պարթևների օգնութեամբ: Այս պատճառով էլ՝ Վեսպասիանոս կայսրը ջնջեց Կոմմազէնի Թագաւորութիւնը և կազմեց մի Հռոմէական նահանգ:

Չորրեքդրամ. Անտիոքոս Գ-ի գլուխը դէպի աջ, վարսա-կալով, որ ծայրերը ապառօշի նման իջնում են զիլ վրայ: Դէմքն անիլուած է և զրամբ մարգարտաշար շրջանակով: Արձանագրու-

Թիւնն է. ΒΑΣΙΛΕΥΣ. ΜΕ. ΑΝΤΙΟΧΟΣ. ΕΠΙ. Թագաւորին մեծի Անտիոքի Նպիփանոսի Մեծի և Նպիպանոսի բառերը կրճատուած են:

Բ. Երեսին կարծն, վրան պսակ, դրամի շրջապատը մի ուրիշ պսակ ներսից և դրսից մարգարտի շարքով: Արձանագրութիւնն է KOMMATHNΩY—Կոմմաղէնի:

2. Միենոյն դրամը առանց զանազանութեան երկու կողմն էլ, միայն Α—Ν տառերով աւելի է արձանագրութիւնը:

3. Երկփող. Անտիոքոսի անդրին միենոյն ձևով, միենոյն արձանագրութեամբ:

Գառ. Թիւ 73

Գառ. Թիւ 73



Բ. երեսին. Այծեղջիւր աջադէմ, որի թիկունքից երևում է մի աստղ և յատակին Սելևկեան խորհրդանշանը՝ խարիսի: Շրջապատը դափնեայ պսակ, ուրիշ պսակով կապուած ներքին և արտաքին մարգարտաշարով:

4. Երկփող. Անտիոքոսի անդրին նախորդների նման և արձանագրութեամբ:

Բ. երեսին. Երկու առատութեան եղջիւր իրար վրայ դարձրած:

Գառ. Թիւ 74

Գառ. Թիւ 75



5. Երկփող. Միենոյնը, ինչ որ էր Թիւ 1 դրամի վրայ:

Բ երեսին. Բացի Կոմմաղէնը ևս արձանագրուած է ΛΑΚΑΝΑΤΩΝ քաղաքի անունը ուր դրոշմուած է:

6. Երկփող. Միենոյնը, ինչ որ էր նախորդը և Բ. երեսին Լականատոնի փոխարէն ΣΕΒΑΣΤΗΝΩΝ և կարիճի փոխարէն բազդը մերկամարմին, դէպ ձախ ընթացքով: Աջուս գաւազան և ձախով մի արմուկներ: Դրոշմուած է Սերաստիա քաղաքում:

7. Երկփող. Նախորդի նման, նոյն արձանագրութեամբ: Մերկամարմին բազդը ձախ թևին բռնած է մի քղամիդ: Դրոշմուած է Սերաստիա:

ԱՆՏԻՈՒՑՈՍ Դ. ԵՒ ԵՈՏԱՓԷ

8. Երկփող Ա. երեսին. Անտիոքոսի անդրին, բաց գլխով և վարսակալով: Անորոշ մի բառ է արձանագրուած, որը Անտիոքոս Դ-ի անունն է, իսկ միւս տողին ΕΠΙΦΑΝΗΣ—Սպիպանող: Բ. երեսին. Եոտափէ թագունու վարսակալով գլուխը, որի տառերը մաշուած են:

Գառ. Թիւ 76



9. Ա. երեսին երեքդրամ. Անտիոքոսի անդրին բաց գլխով: Արձանագրութիւնն է ΒΑΣΙ-

ΛΕΩΣ ΜΕΓΑΛΟΥ Թագաւորին մեծի: Բ. երեսին. Եոտափէն նըստած է գահին, մերկամարմին, ազդերը և ոտքերը նուրբ բէհէզով պատած, դէպի ձախ դարձած, ձեռքին սկահ: Մաշուած է փողը և արձանագրութիւնն է—ΒΑΣΙΛΙΣΣΑ ΙΩΤΑΠΗ ΣΕΒΑΣΤΝΟΗΝ—Թագուհի Եոտափէ Սերաստենոն:

Գառ. Թիւ 77



ԵՈՏԱՓԷ

Ա. երեսին երկփող. Եոտափէ թագունու անդրին աջադէմ, գլուխը վարսակալով դարդարուած, մարգարտաշար շրջանակով: Արձանագրութիւնն է. ΒΑΣΙΛΙΣΣΑ ΙΩΤΑΠΗ ΦΙΛΑΔΕΛΦΟΣ.

Բ. երեսին. Կարեւ շրջապատուած գափնեայ պսակով, որը

պսակուած է մի ուրիշ պսակով, ներսից շրջանակ և դրսից մարգարտաշար: Արձանագրութիւնն է KOMMETHNON—Կոմմազէն:

Գառ. Թիւ 78



11. Ա. երեսին երեքփող: Միւնոյնը, ինչոր էր նախորդի վրայ:

Գառ. Թիւ 84

Գառ. Թիւ 85



Բ երեսին. Կոմմազէնի փոխարէն AΛΕΞΑΜΑΤΩΝ—Ալեքսանտրոն:

Գառ. Թիւ 79



ԵՊԻՓԱՆՈՍ ԵՒ ԿԱԼԼԻՆԻԿՈՍ 72 Թ.

12. Ա. երես, երկփող. Եպիփանոսի գլուխը վարսակալով աջադէմ և մարգարտաշար շրջանակով: Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΕΠΙΦΑΝΗΣ. Թագաւորին մեծի Եպիփանոսի:

Բ. Երեսին. Կալլինիկոսի անդրին վարսակալով, աջադէմ: Արձանագրութիւնն է—ΒΑΣΙΛΕΥΣ ΜΕΓΑΣ ΚΑΛΛΙΝΙΚΟΣ, Թաղաւորին մեծի Կալլինիկոսի:

Գառ. Թիւ 80

Գառ. Թիւ 81



13. Ա Երեսին Երկփող. Երկու մանուկ Թաղաւորները ձիաւորուած դէպի ձախ են գնում: Մարգարտաշար շրջանակով: Դրամն յիշեցնում է Շամէսի դրամները: Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΥΙΟΙ...

. Երեսին. Մի այծեղջիւր դէպի աջ ուղչուած, վերը աստղը և տակը Սեւեկեան խարիսխ խորհրդանշանը: Արձանագրութիւնն է KOMMATHNΩN—Կոմմաղէն:

14. Ա Երես, Երկփող. Մի խարիսխ երկու առատութեան եղջիւրների մէջ զետեղուած, որոնց միջից դուրս են եկած երկու մանուկ Թաղաւորների զլուխները: Ներքեը Երեւում է մի աստղ: Արձանագրութիւնն է ΒΑΣΙΛΕΩΣ ΥΙΟΙ, Թաղաւորինիօի:

Գառ. Թիւ 82

Գառ. Թիւ 83



Բ. Երեսին. Արքայական Թաղը, որը մէջտեղը կարեւոր է դարդարուած, շրջապատն դափնի պսակ, և մարգարտաշար: Արձանագրութիւնն է KOMMATHNΩN—Կոմմաղէնոն:

15. Ա. Երես. Միւնոյն պատկերն ու արձանագրութիւնը:

Բ. Երեսին. Նոյնպէս, միայն Կոմմաղէնոնի փոխարէն—ΛΑΚΑΝΑΤΩΝ Լականատոն արձանագրութեամբ:

16. Ա. և Բ. Երեսները բոլորովին միանման 14 Թ. միայն Կոմմաղէնոնի փոխարէն ΑΥΚΛΑΝΩΝ—Լիկաւոնոն արձանագրութեամբ: